

«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Ե - 88- 2019
06/05/2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար,

«Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնը ժամանակակից սարքավորումներով և բարձրակարգ մասնագետներով հագեցած առաջնային բժշկական օգնության բազմապրոֆիլ բուժօգնություն է: Մատուցում է հասպիտալացում չպահանջող բժշկական բոլոր ծառայությունները՝ զուգահեռաբար իրականացնելով գիտական, կրթական և սոցիալական նշանակության ծրագրեր:

Այսօր մեր շուրջ 30,000 այցելուները սպասարկվում են ճարտարապետական լուծումներով հարմարավետ պայմաններում, հերթերի էլեկտրոնային կառավարմամբ: Ախտորոշումներն ու բուժումն իրականացվում են միջազգային գործելակարգերով և ուղեցույցներով, ինչի նկատմամբ շարունակական վերահսկողություն է սահմանում որակի ծառայությունը:

«Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնը ընթացիկ տարվա փետրվարի 1-ից իրականացնում է տեղամասային պոլիկլինիկայի նոր կցագրումներ սահմանափակ քանակով՝ բացառությամբ մինչև 1 տարեկան երեխաների:

Հաշվի առնելով ՀՀ կրթության նախարարության, ինչպես նաև վերջինիս ենթակա ուսումնական հաստատությունների ներդրումը Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների համար բարձրակարգ մասնագետներ պատրաստելու, առավել կրթված և առաջադեմ հասարակություն կերտելու գործում, որպես համագործակցության հատուկ առաջարկ, պատրաստ ենք նախարարության և բուհական հաստատությունների աշխատակիցներին և իրենց ընտանիքների անդամներին հնարավորություն ընձեռնել կցագրվելու մեր Կենտրոնին և օգտվելու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական ծառայություններից՝ այդ թվում՝

✓ պատվաստումների պատշաճ մատուցում

ՀՀ Կրթության, Գիտության և Վերականգնողականության նախարարություն
Մուտք № 20391-15
07 05 19

- ✓ սուր հիվանդությունների ախտորոշում և բուժում
- ✓ քրոնիկ հիվանդությունների դիսպանսեր հսկողություն
- ✓ հղիության վարում՝ պետական պատվերի շրջանակներում
- ✓ անհրաժեշտ դեղերի տրամադրում՝ պետական պատվերի շրջանակներում
- ✓ փաստաթղթերի ապահովում՝ անաշխատունակության թերթիկ, տեղեկանքներ, ուղեգրեր և այլն:

Պետական պատվերի ծավալներից զատ, պոլիկլինիկայի անդամները հնարավորություն կստանան անցնելու սոցիալական փաթեթի **բուժզննումները առավելագույնը 50 րոպեում**՝ սպասարկվելով մեկ սրահում, մեկը մյուսին հաջորդող սենյակներում:

Առաջարկում ենք այս ամենի մասին տեղեկացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգման ներքո գտնվող բոլոր շահագրգիռ կառույցներին՝ առաջարկությունն իրենց աշխատակիցներին տրամադրելու նպատակով:

Տեղեկացնում ենք նաև, որ կցագրումները իրականացվում են հետևյալ տարբերակներով.

1. Անձը հաստատող փաստաթղթով մոտենալով «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն (Վարդանանց 18/1 հասցեով),

2. Լրացնելով կցագրման հայտը (տես՝ *հավելված 1*) և վերջինիս ստորագրված ու սկանավորված տարբերակն ուղարկելով Directorate@vardanants.am էլեկտրոնային հասցեին,

3. «Վարդանանց» ՆԲԿ-ին կցագրվելու ցանկություն հայտնած գործընկերների տվյալները (համաձայն՝ կից *հավելված 2-ի*) ուղարկելով Directorate@vardanants.am էլեկտրոնային հասցեին, որոնց հետ կապ կհաստատեն Կենտրոնի համապատասխան ծառայության մասնագետները, տվյալները ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԳՈՅԱՆ

Կատարող՝
Քարտուղարության ղեկավար
Ա.Աթաջանյան
+374 10 592100 (2539)